**Հավելված N 1**
**«ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2025/33»* ծածկագրով**
**էլեկտրոնային աճուրդի հրավերի**

# ԴԻՄՈՒՄՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*
## Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու

ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ-ի կողմից «ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2025/33» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) 1,2,3,4,5,6,7 չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ:

ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի՝

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 01338219,
- բանկային հաշվեհամարն է՝ 11811028446001,
- գործունեության հասցեն է՝ ք. Երևան Մարգարյան 45/120,
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ Gross-group23@mail.ru,
- հեռախոսահամարն է՝ +37499210505,
- ռուսերեն լեզվով անվանումն է՝ ГРОСС ГРУП ООО:

Սույնով ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն հայտարարում և հավաստում է, որ՝

1) ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են «ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2025/33»* ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում [1]

2) ընթացակարգին մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու անբարեխիղճ մրցակցություն, գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
- բացակայում է հրավերով սահմանված՝ ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ին

փոխկապակցված անձանց և (կամ) ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:

- ստորև ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ)** և հավաստում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավատի տեղեկություններ:

| Անունը Ազգանունը Հայրանունը | ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված | Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը |
|---|---|---|

[1] Եթե կիրառվում է սույն հրավերի 1-ին մասի 2.4 կետի 2-րդ նախադասությամբ նախատեսված կարգավորումը, ապա << պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում.>> բառերը փոխարինվում են <<կամ սույն ընթացակարգի շրջանակում վերջինիս կողմից՝ որպես պաշտոնական ներկայացուցիչ, մատակարարվող ապրանքներն արտադրող կազմակերությունը, հայտերը բացելու օրվա դրությամբ ունի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Fitch, Moodys, Standard & Poor's ) կողմից շնորհված վարկունակության վարկանիշ առնվազն Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափով:>> բառերով: Ընդ որում նշվում է նաև վարկանիշի չափը և վարկունակության վարկանիշ ունեցող կազմակերպության անվանումը:

| | անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը | հաստատող փաստաթղթի տեսակը և համարը |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |

3) ապահովված է դիմում-հայտարարությունը ներկայացնելուց հետո էլեկտրոնային աճուրդի համակարգի կողմից տրամադրված եզակի ծածկագրի (PIN կոդը) անվտանգությունն ու գաղտնիությունը և դրա օգտագործմամբ էլեկտրոնային աճուրդի համակարգում ընթացակարգին մասնակցելուց բխող ցանկացած գործողություն կատարվում է համապատասխան լիազորություն ունեցող անձի կողմից:

ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացվում է՝ համակարգի միջոցով:

**ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ տնօրեն ՝ Լիանա Ասատրյան**

Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը)

*լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից մինչև հրավերը հրապարակելը:

Digitally signed by
LIANA ASATRYAN 5809860818
Date: 2025.08.25 11:49:51